<u>Հայտարարություն</u>

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

1. Հեռահաղորդակցության վարչության կարգավորման քաղաքականության բաժնի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 89-4.1-17)

Մասնակցում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների և ցանցերի ոլորտի լիցենզավորված անձանց կողմից ներկայացվող տեխնիկատնտեսական տեղեկատվությունների վերլուծությանը, ներկայացնում է առաջարկություններ, մասնակցում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների և ցանցերի ոլորտի լիցենզավորված անձանց կողմից ներկայացվող գործունեության հաշվետվությունների ձևերի և ներկայացման կարգի մշակմանը, ներկայացնում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների և ցանցերի ոլորտի իրավական ակտերի կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ և նախապատրաստում դրանց վերաբերյալ նախագծեր, իրականացնում է Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները, մասնակցում է Բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.

2. Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

Էլեկտրոնային սարքեր և սարքավորումներ կամ ռադիոտեխնիկա կամ կապի ցանցեր և կոմուտացիայի (փոխարկման) համակարգեր կամ բազմաճյուղ հեռուստակապային համակարգեր կամ ռադիոէլեկտրոնային համակարգեր կամ ռադիոկապ կամ ռադիոհաղորդումներ և հեռուստատեսություն կամ կառավարումը և տեղեկատվությունը տեխնիկական համակարգերում կամ հաշվողական մեքենաներ, համալիրներ և ցանցեր կամ տեղեկատվության մշակման և կառավարման ավտոմատացված համակարգեր մասնագիտությամբ բարձրագույն կրթություն,

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, <<Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին>>, <<Էլեկտրոնային հաղորդակցության մասին>>, <<Լիցենզավորման մասին>>, <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

3. Թափուր պաշտոնի հիմքի վերացման ժամկետը՝

Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված անձի կողմից նշանակում կատարվելը.

4. Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետն է՝

«27» «փետրվարի» 2019թ

5. Աշխատավարձի չափը՝

Մեկ հարյուր տասնմեկ հազար հարյուր տասնհինգ (111115) դրամի չափով.

6. Աշխատանքի վայրը, հեռախոսահամարները՝

ք.Երևան, Սարյան 22, հեռ. 52-53-40-108,118

7. Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝ դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն դիմում, տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայականի(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ իսկականի հետ միասին,

մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,
անձնագրի, հանրային ծառայության համարանիշի (սոցիալական քարտի) պատճենները:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, ժամը 10^{00}-ից մինչև 12^{30}-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերը ներկայացնել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝
(Երևան, Սարյան22, հեռ. 52-53-40-108,118):